

# ՕԳԻԻՍՏ ԿՕՆՏ

Մի քանի տնօրէնութիւններ նրա կեանքի ու գրուածք-  
ների մասին:

ՆՐԸ ԺՆՆԿԵՆ ՀԵՐԻՐԵՄԵԱԿԻ ԸԹԻԹՈՎ

I.

## ԿԵՆՍԱԿՐՈՒԹԻՒՆ

ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ՏԱՐԻՆԵՐ

Կօնտը ծնուել է Փրանսիայի Մօնպէլիէ քաղաքում 1798 թւին: Նրա հայրը հարկահաւաք էր ու միջակ կարողութեան տէր, մայրը կրօնամօլ կաթօլիկ: Ամբողջ ընտանիքում առհասարակ տիրապետում էր պահպանողական ոգի, հակառակ այն ժամանակ տարածուող նոր հոսանքին, որին արդէն ենթակալ էր պատանի Կօնտը: Ուստի վերջինիս և իր մօր մէջ անդադար անհամաձայնութիւններ էին ծագում:

Իննը տարեկան ժամանակ Կօնտին տուին Մօնպէլիէի լիցէօնը: Արդէն այստեղ մանուկը ցոյց էր տալիս իւր բնաւորութեան մի քանի յատկանիշ կողմերը: Նա զգւում էր իւրաքանչիւր արտաքին հեղինակութիւնից և կանօնականութիւնից և խօնարհւում էր միայն մտաւոր ու բարոյական գերազանցութեան առաջ: Տեսչին կամ առհասարակ դպրոցի արտաքին կարգաւորութեան վրայ հսկողներին նա չէր հնա-

զանգում, դատողութիւններ էր անում... Իսկ ուսուցիչներին, դասատուներին հնազանգում էր և շատ յարգում: Մանաւանդ յարգում էր նա մատիմատիկայի ուսուցիչ Անկոնտրին, որը ունենալով լայն փիլիսոփայական զարգացում ու բարոյական հազուադէպ յատկութիւններ, տհաճին ազդեցութիւն արաւ Կօնտի վրայ: Այդ ուսուցիչը ոչ միայն սովորեցրեց իւր աշակերտին քննադատօրէն վերաբերուել դէպի հարազատ ընտանիքի կաթօլիկական և թագաւորասիրական զգացումները, այլև վառեց նրա մէջ հանճարի կրակը, որ այնուհետև չհանգաւ:

Տասնուվեց տարեկան հասակում Կօնտը մտաւ Փարիզի բազմարուեստեան դպրոցը: Այդ դպրոցը ուր մշտապէս տիրում էր ազատամիտ ոգի, որ ոչ մի կերպով չէր յաջողում բնաջինջ անել, շատ մեծ ազդեցութիւն ունեցաւ Կօնտի վերայ:

Աշակերտները ապրում էին միասին. ուստի նրանց մէջ առաջ էին դալիս ընդհանուր շահեր. աշակերտները միաձայն բողոքում էին չսիրուած դաստիարակների դէմ և այլն: Բացի այդ տոնային գործերից՝ նրանք մասնակցում էին երկրի մէջ տեղի ունեցող քաղաքական շարժումներին էլ: Դպրոց մտնելիս նրանք երգում էին հաւատարիմ լինել հանրապետութեան և ատել բռնակալութիւնը: Հարկաւոր ժամանակ աշակերտները վաշտ էին կազմում ու կաւում հայրենիքի թշնամիների դէմ: Բայց մանաւանդ ջերմ կերպով մասնակցեցին նրանք 1830 թուի լեղիափոխութեան: Թագաւորական անձնապահ գունդը գրաւեց դպրոցը, իսկ աշակերտները միացան ժողովրդի հետ ու շարունակեցին կռիւր: Առհասարակ բազմարուեստեանները մասնակցում էին բոլոր ներքին լեղիափոխութիւններին ու քաղաքական շարժումներին և յալարնւում էին միշտ որպէս եռանդուն հանրապետականներ: Այդ բոլորը համապատասխանում էր Կօնտի հոգեկան ձգտումներին և զարգացնում էր նրա մէջ նոր աշխարհայեցողութիւնը:

Միև կողմից նա փութաջանութեամբ ուսումնասիրում էր մատիմատիկան և միև դրական գիտութիւնները: Այդ-

պիսով նա սովորում էր ուղիղ, մետոզիկաբար մտածել ու կենտրոնացնել իւր ուշադրութիւնը միայն այն բաների վերայ, ինչ որ ենթարկւում է ճիշտ գիտողութեան և փորձին: Բացի այդ, նա ձեռք է բերում գիտական բազմաթիւ տեղեկութիւններ, նոյն իսկ ժամանակ է գտնում պարապելու գրականական, փիլիսոփայական և հասարակագիտական ընթերցանութեամբ: Այդ ընթերցանութեան մէջ որոնում է նա այն հարցի լուծումը, թէ մարդկութիւնը գէպի որպիսի դրական կազմակերպութեան է դիմում: Պատանի Կօնտը, ի հարկէ, չկարողացաւ լուծել այդ հարցը, բայց նա ի մի հաւաքեց բոլոր տեղեկութիւնները, որոնցից ապագայում շարունակ օգտուելու էր:

Վերջապէս 1816 թուին կառավարութիւնը առիթ գտաւ դարոցը փակելու: Մէկ ուսուցչի կողիտ վարմունքի պատճառով, աշակերտները բողոք բարձրացրին: Վնկարգութիւնս սարգոզների մէջ առաջնակարգ տեղ էր բռնում Կօնտը, ուստի նրան ուղարկեցին հայրենի քաղաքը ու ստիկանութեան հսկողութեան տակ դրին:

Մի քանի ամսից լետոյ նրան կրկին յաջողուեց վերադառնալ Փարիզ, ուր նրա առաջին գործը եղաւ՝ ապրուստի միջոց գտնել: Կօնտի համար իւր ծանօթ գիտնականները մատիմատիկայի մասնաւոր դասեր գտան: Այդպիսով, հայթայիթելով իւր սուղ ապրուստը, նա կրկին սկսեց կարգալ Ֆիզիկական գիտութիւններին, մարդաբանութեան և պատմութեան վերաբերեալ գրուածքներ: Յետոյ նա ստացաւ քարտուղարի պաշտօն բանկիր Պէրիէէ մօտ՝ որ ապագայում նախարար դարձաւ: Կօնտի քարտուղարութիւնը միայն երեք շաբաթ տևեց. ապագայ փիլիսոփան և ապագայ նախարարը խիստ տարբերում էին համոզմունքներով: Այդ ժամանակ կառավարութիւնը որոշել էր թոյլ տալ իրենց ուսումը կիսատ թողած բազմաթուեւստեաններին քննութիւն բռնել և պաշտօն ստանալ, բայց Կօնտը չօգտուեց այդ բախտից, նրա միաքը բոլորովին ուրիշ էր...

Վնա մի երիտասարդ էր—ասում է Լիտրէ—որ ունէր չա-

փազանց վաղ զարգացած, շատ բազմատեսակ ընդունակութիւններ, կատարելապէս ուսումնասիրել էր բոլոր անզգայարանական գիտութիւնները, տեղեակ էր պատմական դոկումենտներին և կամենում էր թափանցել գաղափարների և գիտնական քաղաքականութեան աշխարհը:

Կօնտը առաջիմ ներշնչուած էր միայն տասնութերորդ դարի գաղափարներով: Սակայն շուտով պիտի անցնէր նա տասնութներորդ դարի դրական հասարակական գաղափարներին: Այդ փոփոխութիւնը նրա մէջ սկսուեց, երբ ծանօթացաւ Սէն-Սիմօնի հետ: Կօնտը դարձաւ Սէն-Սիմօնի քարտուղարը ամսական 300 Ֆրանկ ռոճկով, որ միայն սկզբում կանօնաւոր կերպով ստացաւ: Բայց այդ չէ կարևորը: Սէն-Սիմօնի ձեռքի տակ Կօնտը սկսեց լրջօրէն զբաղուել հասարակական խնդիրներով: 1819 թուին «Քննիչ» լրագրում լոյս տեսաւ նրա մի փոքրիկ յօդուածը, որի մէջ արծարծուած էր հետևեալ միտքը: Ժողովուրդը պիտի արտայայտէ իւր ցանկութիւնները. գիտնականները և հրատարակիչները պիտի մշակեն և մատնացոյց անեն այդ ցանկութիւնները իրականացնելու միջոցների վրայ. կառավարութիւնը պիտի իրականացնէ առաջարկուած միջոցները: 1820 թուին Կօնտը հրատարակեց մի ուրիշ յօդուած, որի մէջ որոշում է մարդկային զարգացման մէջ երկու տարեշրջան՝ մէկը քննադատական, միւսը դրական: Վերջապէս 1822 թուին նա հրատարակեց իւր պարական քաղաքականութիւնը (թէև դեռ ուրիշ վերնագրով): Այդ գրուածքները պատրաստելու ժամանակ նա գտնուում էր Սէն-Սիմօնի ազդեցութեան ներքոյ:

Բայց ահա փոքր առ փոքր որոշում է Կօնտը իւր սեփական աշխարհայեցողութիւնը, որը տարբերուում էր Սէն-Սիմօնից: Բնական է, որ ուսուցչի և աշակերտի մէջ պիտի անհամաձայնութիւն ծագէր: Մինչդեռ Սէն-Սիմօնը սկսել էր թեքուել դէպի սանտիմենտարականութիւն և կրօնականութիւն, Կօնտը մեծ արագութեամբ դիմում էր դէպի իւր դրականութիւնը: Նրա ինքնուրոյնութիւնը պարզ երևաց վերոյիշեալ երրորդ

դրուածքի մէջ, որի բովանդակութեան հետ այժմ կը ծանօթանանք:

Արևմտեան-Եւրոպայի Հասարակութիւնների կեանքում միջին դարերից սկսած նկատուում են երկու հոսանքներ, դրական և բացասական, ստեղծող և քանդող: Վերջինս գերազանցում է: Բայց այժմ, երբ քանդող ուղղութիւնն արդէն իւր գործը կատարել է, այդ բացասական ձգտումը դարձել է առաջադիմութեան գլխաւոր արգելաոխիթը: Այդ դրութիւնից դուրս գալու համար, քաղաքակիրթ ժողովուրդները պիտի մի կողմ թողնեն բացասական ճանապարհը ու գնան օրգանական զարգացման շաւղով, պիտի իրենց ոյժերը գործ դնեն նոր հասարակական համակարգութիւն կազմելու համար: Այդ է, Կոնտի ասելով, ժամանակակից դարեշրջանի գլխաւոր կարիքը և այդ է Կոնտի աշխատութիւնների գլխաւոր նպատակը: «ասունութեան հասած հասարակութեան նշանակութիւնը բոլորովին այն չէ, որ նա յաւիտեանս մնայ հնամաշ և անպէտք խրճիթում, որ նա շինել է իւր երեխայական տարիներում, և ոչ էլ այն, որ նա յաւիտեանս մնայ առանց օթեանի»... Այլ քաղաքակիրթ ժողովուրդը պարտաւոր է, օգտուելով անցեալ փորձերից, աւելի լաւ շէնքս կառուցանել, որ յարմարուէր նրա կարիքներին ու պահանջներին: Այդ է մեծ ու ազնիւ գործը, որ պիտի կատարէ ներկայ սերունդը:

Հասարակական վերակազմութեան ծրագրի մշակումը պիտի սկսուի հիմնական գաղափարից, այսինքն այն նոր սկզբունքից, որ պիտի դրուած լինի հասարակական յարաբերութիւնների հիմքում և որ հասարակութեան ձեռնարկութեան համար պիտի տայ մի շարք ընդհանուր գաղափարներ: Ապա թէ պէտք է մշակել այդ համակարգութեան համապատասխան գնազան հիմնարկութիւնները:

Բացի այդ մտքերից, Կոնտը լիշեալ յօդուածի մէջ արծարծում է «երեք դրութիւններ» յայտնի օրէնքը, որի մասին պիտի լետոյ խօսենք: Այդպիսով արդէն՝ իւր այդ վաղ աշխատութեան մէջ Կոնտը բոլորովին որոշ կերպով մատնա-

ցոյց է անում իւր նպատակը, որի համար լեռոյ սկսում է նա ստեղծել իւր գրական փիլիսոփայութիւնը և աւելի ուշ՝ գրական քաղաքականութիւնը: Այդ նպատակն է՝ հասարակութեան կեանքի վերակազմութիւնը: Բոլոր իւր մտքերը կօնար հանդամանօրէն և մանրամասն արծարծում է ապագայում իւր Վերական փիլիսոփայութեան դասընթացը և եզրական քաղաքականութեան համակարգութիւնը վերնագիր ունեցող աշխատութիւնների մէջ:

### ԱՊՐՈՒՍՏԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՍՂՈՒԹԻՒՆԸ

Ուսումնաստեան է երիտասարդը համարեա ոչ մի ուշադրութիւն չէր դարձնում իւր նիւթական գրութեան վերայ: Տարիները անցնում էին իրար ետևից, իսկ նա մի կերպ կառավարւում էր մասնաւոր դասերով, իւր բոլոր ուժը գործադրելով գիտնական զբաղմունքների վերայ: Ահա թէ ինչ է գրում նա իւր մի բարեկամին.

«Նս մտադիր եմ վերջապէս այդ արձակուրդի ժամանակ իմ նիւթական գրութեան մասին հոգալ: Այդ տեսակի բոլոր աշխատութիւնները ինձ համար սաստիկ տխուր են, բայց ես այժմ համոզուել եմ, որ չափազանց քիչ նշանակութիւն եմ տուել մինչև օրս իմ կեանքի նիւթական կողմին: Ես համոզուեցի, որ վերջապէս հասել է ժամանակը, երբ ես փոքր ինչ լուրջ պիտի մտածեմ այդ մասին»:

Մի ուրիշ նամակում գրում է.

«Իմ մտքի համար ոչինչ աւելի մահառիթ չէ, որքան..... իւրաքանչիւր օր մտածել, թէ ինչ պէտք է ուտել վաղը... Այդ մտածելուց ես սաստիկ մտատանջւում եմ, մինչև իսկ յուսահատուում՝ եթէ այդպիսի գրութիւնը սովորական կը դառնայ, հարկաւոր կըլինի հրատարուել իմ բոլոր պարամունքներից, բոլոր փիլիսոփայական ծրագիրներից ու դառնալ լիմարի մէկը»...

Բազմարուեստեան դպրոցում կամ համալսարանում պաշ-